ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

1700 - ԱՄՅԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԽՈՐՀՐԴՈՎ

Անցնող հոկտեմբեր-նոյեմբեր ամիսները եկան վկայելու, որ 1700-ամյակի սեպտեմբերյան եզրափակիչ հանդիսությունները դարձան ոչ թե 1700-ամյակի եզրափակումը, այլ նրանցով շարունակվեց 1700-ամյակի խորհուրդը ազգային-հոգևոր մեր կյանքում: Այն շարունակվեց նոր օրհնված մյուռոնի հեղմամբ, որի դրոշմամբ ամեն օր ավելանում են Քրիստոսի բանավոր հոտի հայ ժողովրդի զավակները: 1700-ամյակի նույն մյուռոնի հեղմամբ անցնող ամսվա ընթացքում օծվեցին ևս մի քանի եկեղեցիներ և կատարված հոգևոր ձեռնադրություններով և օծումներով համալրվեցին Հայոց Եկեղեցու սպասավորների ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի զինվորյալ միաբանության շարքերը, հավաստելով, որ մենք ոչ միայն ժառանգորդն ենք այն ամենի «ինչ որ դարերով երկնել է, ծնել խորունկ մեր հոգին», այլև որ ինչպես 1700 տարիներ առաջ և անցնող դարերի ընթացքում, այնպես էլ այսօր մեր հոգիներում «կենդանի է Տէր Աստուած մէր, Աստուած հարցն մերոց»:

1700-ամյակը այսօր էլ շարունակվում է քաղաքամայր Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցի ժողովրդի ջդադարող հոսքով:

1700-ամյակը շարունակվում է նաև միջեկեղեցական մակարդակով, որն նոյեմբերի սկզբին արտահայտվեց Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ի այցելությամբ: Այս այցը մի անգամ ևս եկավ հավաստելու, որ անցել է «Բյուզանդական վեճերի» շրջանը, որոնք իրենց ողբերգական հետքը թողեցին մեր երկու ժողովուրդների պատմական հետագա ընթացքի վրա: 1700-ամյակի ոգին ու շունչն էր իշխում Գարեգին Բ Վեհափառի նոյեմբերին Ավստրիա կատարած հայրապետական այցելության ժամանակ տեղի ունեցած պետական ընդունելությունների, միջեկեղեցական հանդիսությունների ու արարողությունների և հայ համայնքի հետ հանդիպումների ընթացքում:

1700-ամյակը շարունակվեց նաև միջպետական և միջազգային հարաբերությունների շրջագծում: Սեպտեմբերին Ռուսաց Պատրիարքի այցելությանը նախորդեց Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի պետական պաշտոնական այցը Հայաստան, որի ընթացքում Հայոց Հայրապետն ու Ռուսաց պետության ղեկավարը մեկ անգամ ևս ընդգծեցին հոգևոր-ավանդական այն ընդհանրությունները, որ կան մեր երկու Եկեղեցիների ու ժողովուրդների կյանքում: Նոյեմբերի 1-ին Ս. Էջմիածին եկավ դարձյալ պետական պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Ռումինիայի նախագահ Իլիոն Իլիեսկուն, Հայոց Հայրապետի հետ զրույցի ընթաց-

քում պատմելով, թե ինչպես է Ռումինիայում հանդիսավորապես նշվել 1700-ամյակը և Ռումինիայի Հայոց թեմի հիմնման 600-ամյակը:

Զուգադիպություններն ու համընկնումները հաճախ հոգևոր ներքին մեծ խորհուրդ են ունենում: Այդպիսի խորհուրդ ուներ նաև հոբելյանազարդ 2001 թվականին Հայաստանում քրիստոնեության պետական կրոն ընդունման 1700-ամյակի և Հայաստանի անկախության 10-ամյակի հոչակման հոբելյանների համընկնումը և սեպտեմբերին նրանց միահյուսված նշումը, քանի որ Հայոց Եկեղեցին է եղել այն վեմը, որի վրա բարձրացել է մեր պետականությունը, և այն խանձարուրը, որում պատվել և պահվել է անկախության ձգտումն ու երազը մինչև բարեպատեհ ժամանակներում վերստին մարմնանալը:

Պատմական անցյալի ու ներկայի այս համադրմամբ 1700-ամյակի խորհուրդն ու նրա մշտանորոգ ներկայությունը համայն հայության կյանքում և հայոց պետականության համար ազգիս Վեհափառ Հայրապետը 1700-ամյակի առթիվ գրված կոնդակում՝ այսպես է սահմանում *«Մեր պատմության որոշիչ այս շրջանում հարկ է, որ հավատով ու քրիստոնեական ճշմարիտ արժեքներով իմաստավորենք մեր կյանքը: Գիտակցենք Հայ Եկեղեցու դերակատարությունն իր կոչման բարձունքում, որպեսզի հասարակական մեր կյանքում Հայ Եկեղեցին իրապես դառնա խիղճը և երաշխավորը բարոյականության, ժողովրդի կամքի արտահայտիչը պետության առջև և պետության աջակիցը ժողովրդին ծառայելու արբազան կոչման մեջ»:*